

Հ Ա Յ Կ Ո Կ Ա Ն Ի Ս Հ Լ ՈՒ Ս Փ Ո Գ Կ Ո Մ Ո Տ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԾՐԱԳՐԵՐ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Յ Կ Ո Կ Ա Ն

Լ ՈՒ Ս Փ Ո Գ

Թարգ. իմբ. Ի. Մանուան
Տեխ. իմբ. Վ. Մելիքսերյան
Սըբագրիչ Թ. Սարգսյան

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ^{*)} ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տարբական գպրացում բնագիտության դասավանդման իրն զիրն ե.

1. Հարստացնել աշակերտների գիտակցությունը բնության մասին կռնկրեա պատկերացումներով և նրանց հիման վրա նպաստել տարրական, բայց պարզորոշ գաղափարների առաջացմանը:

2. Բնության մասին յերեխաների ստացած կռնկրեա զիտելիքների հիման վրա դրսեվորել ամենապարզ, նրանց հասկացողությանը մատչելի կապերը և որինաչափությունները բնության գարգացման մեջ, հակադրելով դրանք բնության յերեսութների կռնական մեկնաբանություններին և մերկացներով այդ մեկնաբանությունների անհեթեթությունը:

3. Ծույց տալ բնության տարրերային ուժեղին տիրապետելու վառ պատկերը սոցիալիստական շինարարության պրոցեսում:

4. Յերեխաների մեջ զարգացնել ճետաքրքրություն դեպի բնության ուսումնասիրությունը և ժանոթացնել նրանց ուսումնամիջելու տարրական ձևերի հետ (դիտումներ, վոչ բարդ փորձեր, հերթարիումների, կոլեկցիաների կազմում և այլն):

Ելապիսի դեպքում բնագիտությունը հզոր զենք և դառնում միլիոնակոր յերեխաներին դաստիարակելու վրակես մարտնչող անաստվածներ, վորպես սոցիալիստական տնտեսության ապագա աշխատավորներ, ընդունակ՝ ուսուցման հետագա ողակներում տիրապետելու գիտությանը և տեխնիկային: Տարրական դպրոցում

^{*)} Ծբագրի կազմելուն մասնակցնել են պրոֆ. Վ. Վ. Վահագյանսկին, ընկ. Մ. Ն. Սկատկինը, ընկ. Ա. Ա. Շիրանովը, պրոֆ. Կ. Պ. Յակոսովսկին ընկ. Յե. Ա. Փլորովան և ուրիշները:

Ծբագիրը խմբագրված է Լ. Ժ. Վ. Վագրացների կենտրոնական գիտական պատմական ինստիտուտի բնագիտական կաբինետի կողմէց:

Գլավիտի լիտոր. Ա.—4070

Պատվեր № 8.

Տիրաժ 4000.

Հանձնված եւ արտադրության 15 հոկտ.

Ստորագրված եւ տպագրելու 27 հոկտ. 1938 թ:

կատարվում են առաջին քայլերը տիրապետելու բնության մասին յեղած գիտությունների հիմունքները:

Այդ պատճառով բնագիտության ծրագրի մեջ, նրա բոլոր հիմնական բաժիններում, բնության զարգացման՝ մանուկներին մատչելի որինաշափությունները պարզաբանելու ժամանակ, պետք է տրվի այնպիսի պայծառ նյութ, վոր բնորոշի բնության հարստություններին արհապետելը սոցիալիստական տնտեսության մեջ (արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ): Ծրագրում նշվում ե աշակերտներին արդյունաբերության հսկաների շինուարության և գյուղատնտեսության վերակառուցման վառ պատկերներ տալու անհրաժեշտությունը:

Բնության ուսումնասիրությունը տարբական դպրոցում չպետք է կրի վերացական բնույթ, այլ պետք է սերտորեն կապվի գործնական աշխատանքի հետ (փորձեր, և դիտումներ դասի ժամանակ, բնության մեջ, կենդանի անկյունում, դպրոցամերձ հողամասում): Պետք է տրվին այնպիսի գործնական աշխատանքներ և այնպիսի սահմաններում, վոր նրանց կատարումը նպաստի աշակերտների «գիտության հիմունքներից» ունեցած դիտելիքների ընդարձակմանն ու ամրապնդմանը, նպաստի նրանց կոմունիստական դաստիարակությանը և զինի նրանց ստացած դիտելիքները, գործնականում կերպությամբ:

11.

«Դասատուն պարտավոր ե սիստեմատիկ, հետեւողական կերպով շարադրել իր ավանդելիք դիսցիպլինն, ամեն կերպ վարժեցնելով յերեխաներին ոգտագործելու դասագիրքը և գիրքը, զանազան տեսակի ինքնուրույն զրավոր աշխատանքների կարենետում, լաբարատորիայում, ուսումնական արհեստանոցում աշխատելու և այս հիմնական մեթոդների հետ միասին լայն կերպով կերպությով փորձերի և գործիքների զանազան ցուցադրումներ, եքսկուրսիաներ (զինի գործարան, թանգարան, դաշտ անտառ և այլն): Ընդումին դասատուն պետք ե ամեն կերպ ոգնի յերեխաներին՝ ուսումնական պարագմունքների ընթացքում դժվարությունների հանդիպած ժամանակ: Պետք ե սիստեմատիկ կերպով վարժեցնել յերեխաներին ինքնուրույն աշխատանքի՝ լայն չափով կերպությով զանազան առաջարանքներ տալը. գիտելիքների վորոշ դասընթաց անհրաժեշտ չափով տիրապետել համեմատ խնդիրների և վարժությունների լուծում, մոդելների

պատրաստում, աշխատանքներ լաբորատորիաներում, հերթարիւմների կազմում, դպրոցամերձ հողամասի ոգտագործում ուսումնական նպատակներով և այլն» (ՀամԿ(բ)կ Կենտկոմի 1932.թ. ոգոստոսի 25-ի վորոշումից):

Ծրագրերը՝ վիճ միայն բովանդակությունը պիտի տա, այլև պիտի վորոշի հիմնականում նյութին ուսումնասիրելու հաջորդական ընթացքը, ցույց տա աշխատանքի մեթոդները: Բնագիտության ծրագիրն առանձնապես պետք է լինի դեկավորող փաստաթուղթ՝ ՀամԿ(բ)կ Կենտկոմի վերոհիշյալ դիրքեկտիվ իրագործելու նկատմամբ: Ահա թե ինչու հենց ծրագրի մեջ են առնվազ՝ եքսկուրսիաների, լաբորատորական աշխատանքների, ուսուցչի կողմից կատարվելիք փարձերի գեմոնստրացիաների, կենդանի անկյունում և բնության մեջ կատարվելիք դիտողությունների, դպրոցամերձ հողամասերի անհրաժեշտ մինիմումի ցուցումները:

Կենդանի բնության ուսումնասիրության շատ կարևոր առանձնահատկությունն ե հանդիսանում այնպիսի դիտողություններ կատարելու անհրաժեշտությունը, վորոնք չեն պարփակվում ծրագրային նյութի յուրացման համար հատկացված ուսման ժամանակաշրջանի մեջ: Այնպիսի հարցեր, ինչպիսին են բույսերի աճման ու զարգացման, միջատների զարգացման և այլն հարցեր, պահանջում են յերկարատև դիտողություններ կենդանի անկյունում, բնության ծոցում, պահանջում են փորձեր գնելու դպրոցամերձ հողամասում: Ահա թե ինչու համար անհրաժեշտ յերեխաներից կազմակերպել պատանի բնասերների, պատանի փորձարարների խմբակներ, վորոնց աշխատանքը բնագիտական աշխատանքի անհրաժեշտ բաղկացուցիչ մասն և հանդիսանում: Պատանի բնասերների աշխատանքը կրթական արժեքի հետ միասին չափազանց կարևոր ե յերեխաներին ինքնուրույն աշխատանքի վարժեցնելու համար, նա զարգացնում ե ձեռներեցություն, ինքնագործունեյություն և մշակում ե բնությունը դիտելու ունակություններ:

Բնության վերաբերյալ դպրոցում ստացած գիտելիքները ըրացնելու ե ամրացնելու այդ նույն նպատակներով, ծրագրի մեջ մտցված են առաջադրանքներ ամառվա համար: Այդ առաջադրանքները հաջող իրագործելու համար մեծ նշանակություն կունենա պատանի բնասերների կազմակերպությունը:

Ամառվա համար առաջադրանքները պրակտիկայի մեջ կի-

բոռելու անհրաժեշտ պայմանն ե հանդիսանում ամառվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվառումը: Ամառային աշխատանքների հանրագումարի հաշվառումից ել պիտի սկսվի նորուսումական տարին: Այս կարեոր ե, վորպեսզի դպրոցի պրակտիկայում հաստատվեն աշակերտների ամառային աշխատանքները, այս կարեոր ե նաև այն պատճառով, վոր տալիս ե հարուստ կոնկրետ նյութ, վորի հիման վրա ուսուցիչն իր հետագա աշխատանքները կկառուցի:

Յերեխաների ամառային բնագիտական աշխատանքների կազմակերպման գործում պետք ե ոգտագործվեն առաջին հերթին այն հանրավորությունները, վորոնք գոյություն ունեն կազմակերպված մանուկների կյանքի պայմաններում, այն ե՝ պիտոնի լագերների, մանկական հրապարակների, մանկական գաղութների և այլն պայմաններում:

Չեն կարող բացառվել նաև անհատական բնույթի առաջադրանքները՝ բնության վերաբերյալ դիտողություններ կատարելու գծով: յուրաքանչյուրի աշխատանքներն ստուգելու, յուրաքանչյուր աշակերտի ամառային առաջադրանքների կատարման արդյունքների ամբողջ դասարանի կողմից դիտան յենթարկելու պայմանով:

III.

Ի-ին և Ա-րդ դասարաններում աշակերտներին բնության մասին գիտելիքներ պետք ե տրվեն ընթերցանության դասերին, դեպի բնությունը կատարած եքսկուրսիաների ժամանակ, արտադրոցական դիտողություններ (բնության մեջ, կենդանի անկյունում և դպրոցամերձ հողակասում) կազմակերպելու միջոցով: Կյունում և դպրոցամերձ հողակասում) կազմակերպելու միջոցով:

Ի-ին դասարանի աշակերտների հետ ուսումնական տարրա ընթացքում պետք ե անցկացվի 4-5 եքսկուրսիա դեպի բնությունը տարածված ծառերի, թփուտների, իտուաբույսերի և կենդանական աշխարհի նրկայացուցիչների հետ ծանոթանալու համար, նաև դիտելու բնության սեղոնային փոփոխությունները: Այդ եքսկուրսիաների նյութը նույնականացնելու համար անհնարինությունը պահպանվում է մայրենի լեզվի, թվաբանության, նկարչության դասերին:

1). Վաղ աշուն, 2). ուշ աշուն 3). ձմեռ, 4). սաոցի բացվելու ժամանակ, 5). ծառերի բողբոջների բացման ժամանակաշրջանը:

Ա-րդ դասարանի աշակերտների հետ պետք ե անցկացվեն հետեւյալ եքսկուրսիաները: Եքսկուրսիա դեպի բանջարանոց

և եքսկուրսիա դեպի այգի (պուրակ կամ անտառ) տիպիկ բույսերի և կենդանիների հետ ծանոթանալու համար, ձմեռը՝ եքսկուրսիա դեպի կոլտնտեսության կամ խորտնտեսության անասունների գործը) (գյուղական դպրոցի համար), Դաշնանը՝ եքսկուրսիա դեպի անտառ (պուրակ և այգի), բնության գարնանային արթնացումը դիտելու համար, եքսկուրսիա դեպի դաշտ՝ գյուղատնտեսական աշխատանքները դիտելու համար (գյուղական դպրոցի): Դպրոցները կատարում են եքսկուրսիա դեպի կենդանաբանական այգի այն քաղաքներում, վորտեղ կան կենդանաբանական այգիներ: Թված եքսկուրսիաներն անցկացնելու և եքսկուրսիաներից բերած կոնկրետ նյութն ուսումնասիրելու համար անհրաժեշտ ժամանակը հատկացվում ե մայրենի լեզվի դասերի հաշվից:

Կենդանի բույսերի և կենդանիների վերաբեյալ յերկարատեղ դիտողությունները կատարվում են դասերից դրւրս կենդանի անկյունում կամ դպրոցամերձ հողամասում, իսկ դիտողությունների արդյունքներն ոգտագործվում են կամ առանձնապես այդ նպատակին հատկացված ժամերին՝ կամ ընթերցանության խօսքի դարձացման, գրության, նկարչության դասերի ժամանակ:

Յեզ Ի-ին, և Ա-րդ դասարաններում անց են կացվում բնության սեղոնային յերեսությների դիտողություններ (յեղանակի և բնության որացույց): Այդ դիտողությունների նյութը նույնական ոգտագործվում է մայրենի լեզվի, թվաբանության, նկարչության դասերին:

Բնության ուսումնասիրման այդ ամբողջ աշխատանքների միջոցով Ի-ին և Ա-րդ դասարանների աշակերտները պետք ե ձեռք բերեն մի շարք կոնկրետ պատկերացումներ ամենատարածված տեղական բույսերի և կենդանիների մասին: Յերեխաները պետք ե սովորեն անսխալ ճանաչել ուսումնասիրված բույսերն ու կենդանիներին բնորոշիչ հատկանիշներով և ցույց տալիս կարողանան ճիշտ անվանել նրանց: Պետք ե կարողանան ցույց տալ և դիտենան բույսերի ու կենդանիների մարմինների հիմնական մասերի (գործարանների) անունները, գիտենալ վո՞րտեղ և ապրում, ի՞նչով ե սնվում, ի՞նչպես ե իրեն կեր ճարում տվյալ կենդանին, ի՞նչպես ե պաշտպանվում թշնամիներից: Պետք ե ունենան պարզ պատկերացում վորոշ բույսերի և կենդանիների (որինակ գործեր, թիթեռներ, սիսեռ և այլն) զարգացման մասին: Գիտենան, ի՞նչ

ոգուտ կամ վնաս և տալիս տվյալ կենդանին կամ բույսը, ի՞նչ-
պես խնամել ոգտակարներին և պայքարել վնասակարների գեմ:

Յերեխաները պետք ե սովորեն եյական հատկանիշների հիման վրա անսխալ վորոշել ուսումնասիրված կոնկրետ բույսերի և կենդանիների վորոշ խմբերի պատկանելը, ծառ, թուփ, խոտ: Մառը՝ փշատերեկ և սաղարթավոր. բույսերը՝ մշակովի և վայրի: Կենդանիները՝ ընտանի և վայրենի, խոտակեր և գիշատիչ: Թշու-
չունները՝ ձմեռող և չլող:

Յերեխաները պետք ե տիրապետեն իրենց համար մատչելի ժավալով այսպիսի հասկացողությունների, ինչպիսին են՝ բույս, կենդանի, միջատ, ձուկ, թոչուն, գազան, Պետք և գիտենան տար-
վա յեղանակների հաջորդականությունը և ամեն մի սեղոնի բնո-
բոշիչ հատկանիշները:

1938-39 ուսումնական տարվանից III-րդ և IV-րդ դասարան-
ների ծրագրի մեջ մտցրած ե «բույսերի կյանքը» թեման: Դրա
կապակցությամբ կրամատված ե III-րդ դասարանի նյութի ծավալը
հետեւյալ թեմաներից «Հող և ոգտակար հանածոներ», «Զուր» և
«Ող»: IV-րդ դասարանում՝ «Կենդանիների կյանքը» թեմայից:
Ծրուգրվելու նշութիւն նրանք ունենալու համար լաւ ժամանակի

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հող և ոգտակար հանածոներ . . .	—27 (32) ժամ ¹⁾
2.	Զուր	—12 (16) »
3.	Ող	—10 (11) »
4.	Ելեկտրական յերեւութները բնու-	
	թյան մեջ	— 3 (3) »
5.	Բույսերի կյանքը	—14 (16) »
	Ընդամենը՝	66 (78) ժամ:

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Բույսերի կյանքը	—15 (12) ժամ
2.	Կենդանիների կյանքը	—39 (32) »
3.	Մարդու մարմնի կազմությունը	
	և կյանքը	—44 (34) »
	Ընդամենը՝	98 (78) ժամ:

1) Փակագծի մեջ առնված թիվը քաղաքի դպրոցների ժամերի թիվն եւ

ԾՐԱԳԻՐ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ՀՈՂ ՅԵՎ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ

Դիտողություններ հողի վրա բնության մեջ (եքսկուրսիա հողի բաց շերտերը տիսնելու): Հողի բաղադրությունը. կավ, ավաղ, փտած դեռ չփտած բույսերի և կենդանիների մնացորդներ: Բնոր-
քի կախումը հողից:

Պետք հասնել բարձր բերքի վոչ թե աստծո ոգնության և
աղոթքների հույսով, այլ հողի պարագացումով և լավ մշակու-
մուի:

Զող և ջրախառն կավ, նրա հատկությունները՝ գույնը, ամ-
րությունը, մածուծկությունը. Հուրն իր միջով դժվար և բաց
թողնում:

Ավաղ և նրա հատկությունները՝ համեմատած կավի հետ.
Գույնը, փայլը, կարծրությունը, բաղկացած և հատիկներից, ջուրը
լավ և բաց թողնում: Կարծր տեսակներ (ամուր ապարներ),
վորոնցից առաջացել են ավաղը և կավը: Գրանիտ և հասկացու-
թյունուն լեռնային տեսակների մասին:

Կարծր մարմինների ընդարձակվելը տաքացնելուց և սեղ-
մըկելը՝ սառչելուց: Ջերմության և ցրտի աղղեցությունը լեռնա-
յին տեսակների վրա: Ինչպես են առաջացել ավաղը և կավը
(լեռնային տեսակների քայլայումից): Լեռնային տեսակների,
կավի և ավաղի տնտեսական ոգտագործումը շինարարության մեջ:
Աղյուսների, կավեղենի, ապակեղենի արտադրություն: Կրաքար.
Ինչպես ճանաչել կրաքարը, նրա գույնը կարծրությունը, ի՞նչ
կստացվի, յեթե վրան թթու կաթեցնենք: Կրաքարի այլ տեսակ-
ները՝ կավիճ, կոպիտ, կրաքար, մարմար: Ի՞նչպես են հանում
կրաքարը: Զհանգցրած՝ հաղեցրած կիր: Կրի գործածությունը:
Կրաքարերը, ծովային կենդանիների մնացորդներ են: Գեղում-
ների ժամանակ գտնված կենդանական մնացորդների հետ կապ-

ված սնոտիապաշտությունների (որինակ «սատանի մոռ») և ուշը մերկացում:

Ցեմենտ-նրա հատկությունները և ոգտագործումը շինարարության մեջ:

Քարաղ և ծովաղ: Աղի լուծելիությունը ջրի մեջ: Աղի բյուրեղների առաջանալը: Աղի նշանակությունը մարդու համար: Աղի սատանալն աղի ճիգ և ծովի ջրից: Քարաղի մշակումը: Հասկացողություն վրապես պարարտանյութ գործածվող աղերի մասին (ձանոթություն հանքային պարարտանյութերի նմուշներին):

Վառելանյութերի արդյունահանումը՝ տորֆի, քարածխի, նավթի: Տորֆի և քարածխի այլատեսակների համեմատությունը բար գույնի խտության, այրման:

Տորֆի առաջացումը ճահճային բուսականությունից, քարածխի առաջացումը ճնագույն անտառների բուսականությունից:

Տերտերների հավաստիացումների անհեթեթությունն այն մասին, թե յերկիրն առաջ ե յեկել ընդամենը յոթ և կես հազար տարի սրանից առաջ: Հանածո վառելանյութի և նավթի նշանակությունը սոցիալիստական արդյունաբերության մեջ: Պատկերներ քարածխի, տորփի և նավթի արդյունահանման աշխատանքների: Ի՞նչ ե ստացվում նավթից՝ սպիտակ նավթ (կերոսին) բենզին, յուղեր:

Մետաղներ՝ յերկաթ, պղինձ կապար, ալյումինում, վոսկի: Նրանց համեմատությունն ըստ արտաքին տեսքի (գույն, փայլ) և ըստ հատկությունների՝ ամրության, ծանրության, հալվելը:

Հասկացողություն հանքաքարերի մասին (յերկաթի, պղնձի): Պատկերներ հանքահանման աշխատանքների: Մետաղի ստանալը հանքաքարից: Հասկացողություն հրահալոցի մասին: Մետաղների նշանակությունը ԽՍՀՄ-ի ինդուստրացման մեջ:

Եթե կուրսի ՅԵՎ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐՏԱ-
ԳԻՐ ՄԻՒՄՈՒՄ

1. Եքսկուրսիա հողի բաց շերտերը տեսնելու (փոս, վլվածք)
2. Զննական ուսումնասիրություն (փորձեր և նմուշների լաբարատոր ուսումնասիրություն) հողի, գրանիտի, կրաքարի, աղի, տորփի, քարածխի, մետաղների:

2. Զ Ո Ւ Բ

Ջրի գոլորշիացումը: Մառախուղի, ցողի, անձրևի յեղյամի և ձյան առաջանալը: Անձրևի, կարկուտի և յերաշտի առաջացման կրօնական բացատրությունների անհեթեթության մերկացումը: Ճողի և յեղյամի արհեստական կերպով ստանալու փորձերի դեմոնստրացիա: Պատմվածք արհեստական կերպով անձրև ստանալու մասին: Այս փաստերը հակադրել յեղանակի վրա—«ազդելու» կրօնական միջոցներին (մաղթանքներ և ուրիշ մոգական յեղանակներ): Ջրի շրջանառությունը բնության մեջ: Ջրի ուժի ոգտագործումը մարդու կողմից (Դնեպրոգես, Զագես, Չորագես, Քանաքեռգես): Ջրի յերեք վիճակը: Ջրի ընդարձակումը տաքացման տևուց: Հասկացողություն ջերմաչափի կազմության մասին (Ցելսիուսի), ջիրմաչափից ոգտվելու հմտություն: Ջուրը յեռացնելը և սրան գոլորշու փոխարկելը: Գնուրջու ընդարձակումը և առաձգականությունը: Գոլորշու այդ հատկության ոգտագործումը շոգեշարժման ներում: Պատմվածք այն մասին, թե ինչպես յեկեղեցական-ները գրգռում եյին խավարամիտ համատացյալ մարդկանց առաջին յերկաթուղիների և շոգենավերի դեմ:

Ջրի լուծիչ հատկությունը (փորձեր): Ջրի մեջ լուծվող և չլուծվող նյութեր: Պղաոր ջուրը քամելը: Քամած ջուրը գոլորշեցնելը և նրա մեջ նստվածք հայտնաբերելը:

Փորձերի պարտադիր մինիմում: Ջրի գոլորշեանալը և գոլորշու նստելը սառն առարկայի վրա: Ծիծածնի ստանալը: Ջրի ընդարձակումը տաքանալուց, փորձ գոլորշու առաձգականության վերաբերյալ: Փորձեր ջուր քամելու, թորելու և նրա լուծունակության վերաբերյալ:

3. Ո Դ

Ողբ—գաղ և: ՈԴԲ տեղ և գրավում: Ողն ունի կշիռ քամին ողի շարժումն և: Տաք և սառն ողի շարժումը սենյակում:

Ողի առանձնահատկությունները (ողային ատրճանակ): Ողի ընդարձակումը տաքանալուց: Ողապարեկի կազմությունը: Առաջին թոփչքները: Մեր ողաչուների և ստրատոստատների փայլուն թոփչքները: Մերկացում կրոնական պատկերացումների, այն մասին, թե յերկինքն «աստծուն բնակավայրն ե:

Ողը վատ և հաղորդում ջերմությունը: Այդ հատկության ոգտագործումը շենքերը տաքացնելու համար:

Քամու ուժի ոգտագործումը, հողմնացույցներ, հոմնաշարժիչներ: Փորձերի պարտադիր մինիմում:

Ողի գոյությունն ապացուցող փորձեր: Փորձեր բաց դրան մոտ մոմի միջոցով սենյակի ողի շարժումը պարզելու համար: Ողային ատրճանակի կազմությունը (ողի առաձգականությունը) Փորձ ողի ջերմադորդության վերաբերյալ:

4. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԵՐԵՎՈՒՅՑՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամպրոպ: Կայծակն ու վորոտը վորպես ելեկտրական յերեութներ: Կայծակի և վորոտի հնա կապված կրոնական նախապաշարումների անհեթեթությունը: Կայծ ստանալը շփման միջոցով: Շանթարգելի կազմությունը: Ելեկտրականության ոգտագործումը մարդու կողմից:

5. ԲՈՒՅՍՈՒԹ

Ծառերից և թփերից (որինակ. բալի, սալորի, խնձորենու, տանձննու, ուռենու, յասամանի, բարդի ձառի, կաղնի և ուրիշ ծառեր) կտրած և ջրի մեջ դրած ճյուղերի վրա բողբոջների բացվելը և շիվերի զարդանալը նրանցից բողբոջների լցվելը, շվեզարդանալը, բողբոջի կազմությունը (համառոտ) սերմերի ծլելը (որ. սիսեռի, լորու, արեածաղիկի, բողիկի, շաղպամի, կաղամբի, թղիկ ծառի, լորենու, և այլն): Արմատի, ցողունի և տերեների յերևալը: Բույսի հետագա զարգացումը: (Դիտումներ կենդանի անկյունում: Բույսերի աստիճանական զարգացումը ցույց տվող հավաքածուների պատրաստումը):

Ծանոթություն բույսերի ծաղկմանը, պարզ արտահայտված մասեր ունեցող խոշոր ծաղկի կառուցվածքի հետ (որ. բալի, շուշանի, կակաչի գարնանածաղկի բողկի և այլն), պսակ, բաժակ առելքներ, վարսանդ:

Պտղի զարգանալը սերմարանից, (որինակ. բողկի, կաղամբի, բալի-դիտողություններ կենդանի անկյունում և բնության մեջ):

Ծանոթություն մի քանի (3-4) ըոտար յերկրյա բույսերի հետ սենյակային բույսերի, (որինակ, կակտուս, ֆիկուս, արմավենի, կիտրոն, խորդենի և այլն): Կարողանալ տարբերել նրանց արտաքին տեսքով, դիտենալ անունները, կարողանալ ցույց տալ

և անվանել բույսի գլխավոր մասերը: Դիտենալ ինչ պայմաններում են աճում այդ բույսերն իրենց հայրենիքում և ինչպիսի պայմաններ պետք ե ստեղծել նրանց համար, վունրանք լավ աճեն սենյակային պայմաններում: Ծառերը և անտառի թփուտները (պուրակի, այգու) գարնանը. նրանց ճանաչելն արտաքին տեսքից: Դիտողությունների բողբոջների բացվելու, շիվերի զարգացման, ծաղկման և պտուղների առաջացման վրա:

Տվյալ վայրում ամենատարածված շուտ ծաղկող խոտաբույսերը (որինակ. ձնածաղիկ խոճիկ, զարնանածաղիկ, կովածաղիկ մանուշակ և այլն): Ձանազանել նրանց արտաքին տեսքից. զետենալ անունները, կարողանալ ցույց տալ և անվանել գլխավոր մասերը, դիտել զարգացումը:

ԿՐՍԿՈՒՐՍԻՑՆԵՐԻ ՅԵՎ, ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՑՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՔ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՄ ՄԻՆԻՄՈՒՄ

1. Յերկու եքսկուրսիա դեպի բնություն վաղ և ավելի ուշ գարնանը:

2. Յերկարատև դիտողություններ բույսերի զարգացման, նրանց ծաղկման և պտուղների առաջացման վրա:

3. Գործնական պարապմունքներ դասարանում. բողբոջի կազմության ուսումնասիրումը:

Ծանոթություն. Բույսերի զարգացման վրա դիտողություններ պետք ե կատարել վաշ միայն զպրոցական բնության անկյունում, այլև մարկերում, թմբերում, դպրոցի բակում և դպրոցամերձ հողամասում աճեցրած բույսերի վրա:

Ա.Ո.Զ.Ա.Գ.Ա.Ն.Բ Ա.Մ.Ո.Ռ.Վ. ՀԱ.Մ.Ո.Ր

1. Կազմել տեղական հողերի հավաքածու:

2. Կազմել տեղական ոգտակար հանածոների հավաքածու:

3. Կազմել այնպիսի հերթարիսում, վորը ցույց տա թե ինչպիսի բույսը զարգանում և սերմեր (կոնկրետ բույսի վրա):

4. Դիտողություններ կենդանիների (1-2 որինակի) վրա բնության մեջ՝ ըստ պարզ հարցացուցակի արտաքին տեսքը և մեծությունը բնակավայրը, կերակուրը, սովորությունները, սպակարությունը կամ վնասակարությունը:

ԶՈՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԲՈՒՅՈՒԹԵՐ

Պտուղների բազմազանությունը դանազան բույսերի մոտ (որինակ վարունգ, պոմիդոր, դդում, խնձոր, սիսեռ և այլն): Պատուղների առաջացումը սերմարանից (դիտումների ամփոփում): Սերմերի առկայությունը պտուղների ներսում:

Պտուղների և սերմերի տարածման տարրեր յեղանակները կենդանիների, քամու և ինքն իրեն ցրելու միջոցով:

Ծաղկավոր և անծաղիկ բույսեր: Գիտենալ մի քանի տեղական անծաղիկ բույսեր (սունկեր, ձարխոս, մամուռ): Անծաղիկ բույսերը չեն ունենում ծաղիկներ, պտուղներ և սերմեր: Նրանք բազմանում են սպորներով:

Բույսերի ոգտագործումը մարդու կողմից. հացահատիկային բույսեր (ցորեն, հաճար, յեղիպտացորեն). բանջարեղեններ: Անասունների կերի բույսեր (վարսակ, առվույտ), թել ավող բույսեր (վուշ, կանեփ բամբակ), Ենանյութ տվող բույսեր (շամի յեղիպնի և այլն):

Մանոթություն տեղական թունավոր բույսերի հետ (որինակ, խելառ խոտ, գժախոտ, տիրմատ, ճանճասպան, մոլախինդ, գըֆուկ և այլն): Կարողանալ ճանաչել նրանց արտաքին տեսքից գիտենալ անունները գիտենալ ի՞նչ վնաս են տալիս նրանք առողջությանը: Ինչպես են մարդիկ ընթացք տալիս բույսերի զարգացմանը և բազմացմանը (խորհուտեսությունների և կոլտնտեսությունների բարձր բերքի որինակներ): Միշուրինի, Լիսենկոյի աշխատանքները):

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆՆԵՐԻ ՑԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՌՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՊԱՐՏՈՂԻՐ ՄԻՆԻՄՈՒՄ

1. Եքսկուրսիա դիտելու պտուղների և սերմերի տարածումը:

2. Պտուղների ուսումնասիրությունը դասարանում և այնպիսի ժողովածուների պատրաստումը, վորոնք ցույց կտան զանազան պտուղների կաղմությունը և տարածվելու հարմարումները:

3. Տեղական մշակովի բույսերի և մոլախոտերի հերբարիումներ կաղմել:

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Անվողնաշար կենդանիներ. Զրաբգեղ, թիկնալող, ճպուռ, թրթուռ, ծանոթություն նրանց արտաքին տեսքին և կյանքին:

Զկները՝ վողնաշարավոր կենդանիներ են: Քաղցրահամ ջրերի մեջ ապրող ձկներ՝ որինակ. ծածան, գայլածուկ, Շոփային ձկներ՝ շնաձուկ: Զկան հարմարվածությունը ջրային կյանքին: Զկների ձու դնելը:

Զկների ու ձագերի մասսայական վոչնչացումը՝ զանազան գիշատիչների կողմից:

Գաղափար ձկնաբուծության մասին: Զրամբարները ձկներով բնակեցնելը: Զրամբարները մաքրելը, պայքար ձկների գիշատիչների դեմ:

Ցերկենցաղները և սողունները՝ վողնաշարավոր կենդանիներ են: Գորտը վորպես կյանքի մի մասը ջրում, մյուս, մասը ցամաքում անցկացնող կենդանու որինակ: Թունավոր և անթունոձեր՝ բարեխառն և տաք յերկրներում (որինակ՝ լորտու, իժ, վիշապ, ոռ): Կրիաներ, կոկորդիլաներ, նրանց պաշտապանության զրահները: Մողեսներ, նրանց պոչի հատման յուրահատուկ ընդունակությունը:

Թուչունները՝ վողնաշարավոր կենդանիներ են: Թուչունների թըռչելու հարմարանքը: Փետուրների և աղվամազի նշանակությունը: Թուչունների մարմնի ընդհանուր կառուցվածքի առանձակագործությունը (իրանը, թևերը, սնամեջ վոսկորները): Թուչունների բազմազանությունը՝ կապված նրանց կենսաձևի, կերպակուր գտնելու յեղանակի հետ: Տալ թուչունների մի քանի ցայտուն որինակներ. գիշատիչներ՝ (արծիվ-բազե). Հատիկակերներ՝ (ճընճըղուկ, աղավնի): միջատակերներ՝ (ծիծեռնակ, յերաշտահավ):

Թուչունների բազմացումը, ձվի կազմությունը: Կաթնասունները՝ վողնաշարավոր կենդանիներ են: Գլխավորապես բուսականը կերպով մավոր կենդանիներ՝ ընձուղտու, զերը, փիղ, ուղտ յեղիներու: Բուսակեր կենդանիների հսկայական նշանակությունը մարդու կյանքում: Ընտանի կենդանիների խնամքը: Ընտանի կենդանիների խնամքի հետ կապված սննդիապաշտությունների և սախալաշարումների մլամազ և անհեթեթությունը: Ի՞նչպես ե մարդը դուրս բերել ընտանի կենդանիների զանազան տեսակները: Սոցիալիստական կենդանաբուծության նվաճումների վառ որինակներ: Գիշատիչներ՝ առցուծ, վագր, սպիտակ արջ:

Նրանց գունավորումը: Ինչպես են նրանք ապրում և ինչպես վորս անում: ծովային կենդանիներ. փոկ, կետի հետ կապված կրոնական հեքիաթների անհեթեթությունը:

Կապիկները՝ արևադարձային անտառի մագլցող կենդանիներ են:

Եթևուրսիների ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻԲ ՄԻՆԻՄՈՒՄ

1. Եքսկուրսիա դեպի ջրամբար:

2. Եքսկուրսիա դեպի կենդանաբանական այգի կամ թանգարան (վորտեղ կա):

3. Եքսկուրսիա դեպի ճագարաբուծարան կամ թռչնաբուծարան:

4. Դիտողություններ կենդանի անկյունում՝ միջատների, ձկների, յերկենցաղների, սողունների, թռչունների մանր կաթնառունների վրա:

Թանկալի յե կինոֆիլմերի և դիապոզիտիմերի դիտում՝ կյանքը ծովի խորքում, տաք և ցուրտ յերկներում կենդանիներ:

3. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ԿՅԱՆՔԸ

Մարդու և կենդանիների արտաքին տեսքի համեմատություն (նմանությունը և տարբերությունը). մարմնի գլխավոր մասերը (գլուխ, պարանոց, իրան, վերջավորություններ) և ծածկույթը (մաշկ) Մկաններ, նրանց աշխատանքը. մկանների ողնությամբ շարժվումն մարդու և կենդանիների մարմնի մասերը:

Կմախքի հիմնական մասերը՝ վողնաշար, գանգ, կրծքի վանդակ, թիակներ, անրակներ, կրնք, վերջավորություններ (շոշափել սեփական վոսկորները): Կմախքը վորպես մկանների հենարանը և ներքին գործարանների պաշտպան: Վողնաշարի ծովելը՝ մարմնի անկանոն դիրքի պատճառով, նախազգուշական միջոցներ ֆիզկուլտուրայի նշանակությունը:

Ներքին գործարաններ: Գանգուղեղի, վողնուղեղի, սրտի, թոքերի, ստամոքսի, աղիքների, լյարդի, յերկիամների և միջապարկի տեղը և դիրքը: Մարդու և կենդանիների ներքին գործարանների ձևի և դիրքի համեմատումը:

Սննդի անհրաժեշտությունը մարմնի աճման և աշխատանքի համար: Մարսողություն. կերակրի մանրանալը և թրջվելը բերանում, նրա փոփոխությունը ստամոքսում և աղիքներում, վերամշակված կերակրի ներծծում աղիքների մեջ: Առօղջ սննդի կանոնները:

Շնչառություն: Գաղափար թոքերի կազմության մասին: Աղին նշանակությունը մարդու և կենդանիների համար: Գաղափար ողի բաղադրության մասին՝ թթվածին և աղոտ: Թթվածնի հատկությունները: Ածխաթթու գաղը և նրա հատկությունները:

Թոքախտ և նրա տարածման միջոցները: Ծխելու մասը: Գաղափար թռւնավոր գաղերի և հակագաղի մասին: Արյան սրտի և արյունատար անոթների նշանակությունը, անդանյութերի և թթվածնի տարածումը մարմնի մեջ՝ արյան միջոցով:

Քրտնքի արտաթորումը (մաշկ) և մեղի արտաթորումը (յերիկամներ և միզապարկ):

Ուղեղի և նյարդերի նշանակությունը:

Զգայարանների գերը: Նրանց կապն ուղեղի հետ: Ինչպէս պահպանել լավ լսողությունն ու տեսողությունը:

Մարդու և կենդանիների մարմնի կառուցվածքի նմանությունը: Մարդու կենդանական ծագումը: Մարդու «աստվածացին» ատեղծագործության մասին յեղած կրօնական ուսմունքի անհեթեթությունը և դասակարգային եյությունը: Մարդու մարմնի կառուցվածքի առանձնահատկությունները՝ մարմնի ուղղաձիգ գիրք, առջեկի վերջավորությունների ազատագրումը քայլելուց և նրանցով աշխատելու հնարավորությունը, ավելի զարգացած ուղեղ: Մարդու հմական տարբերությունը կենդանիներից՝ աշխատանք և գործիքներ պատրաստելու կարողություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻԲ ՄԻՆԻՄՈՒՄ

1. Դիտողություններ սեփական մարմնի վրա, վոսկորների շոշափում, յերկղլխա մկանի չափում թուլացած և կծկված վիճակում, կրծքի վանդակի չափում՝ ներշնչման ժամանակ, զարկերակների հաշվում՝ հանգիստ վիճակում, և աշխատանքի ժամանակ:

2. Հերձել ճագար, գորտ կամ այլ վողնաշարավոր փոքր կենդանի:

3. Վոսկորի այրում և նրա թրջելը թթվի մեջ:

4. Փորձեր՝ սննդանյութերի բաղադրությունը վորոշելու վերաբերյալ (շուր, այրվող նյութեր, մոխիր):

5. Փորձեր՝ ողի բաղադրությունը և թթվածնի ու ածխաթթվի հատկությունները պարզելու վերաբերյալ:

6. Փորձեր՝ ներշնչած և արտաշնչած ողի՝ բաղադրությունը՝
պարզելու համար:

7. Եքակուրսիա դեպի տեղական առողջապահական թանգառան (վորտեղ կա):

ՆԹՈՒԹԵՐ ԱՌՈՂՋՈՂԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՇԸ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԳԱՐԱՊՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Սեփական մարմնի խնամք, ԶԵԿՔԵՐԻ, պարանոցի, գլխի՝
յերեսի, քթի, ատամների մաքրությունը, Կարողանալ գործածել
ոճառ, ջուր, ատամի խոզանակ, ձեռքի թաշկինակ, սրբիչ: Ի՞նչ-
պես նստել սեղանի առաջ՝ պարապմունքի ժամանակ:

Կերակուր և ջուր՝ սննդի համար: Կերակրի առաձին ամա-
նեղեն և նրա մաքուր պահելը: Ուսուելուց առաջ ձեռքերի լվանալը
և ուտելուց հետո բերանի վողողելը:

Ի՞նչպես պահել խմելու ջուրը: Յեռացրած ջրի գործածությունը:

Քուն: Քնի ժամանակը և տևողությունը: Անկողնի և նրա
պարագաների խնամքը:

Խաղերը և սպորտը ձմեռը (չմշուկներ, դահուկներ, սարից
սահելը և այլն): Նրանց նշանակությունն առողջությունն ամրացը-
նելու գործում:

Հագուստի և վոտնամանների նշանակությունը և նրանց
պահպանումը:

Հոգատարություն շենքի նկատմամբ: Ողափոխելը և մաքուր
պահելը: Շենքերը մաքրելու և ողափոխելու յեղանակները:

Առողջ և հիվանդ մարդ: Կեղտը՝ հիվանդության բուն (քոս,
ծաղկեկ): Ի՞նչպես նախապաշտպանվել վարակվելուց և վարակը
տարածելուց: Կրոնական ծեսերի վնասակարությունը: Հեքիմու-
թյան վնասակարությունը: Բժշկին դիմելու անհրաժեշտությունը
հիվանդանալու դեպքում:

Սրկը, ջուրը և ողն ամրապնդում են առողջությունը: Ի՞նչպես
կանոնավոր կերպով ոգտվել արևից, ջրից և ոդից:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ծանոթություն դասարանի յերեխանների ընտանեական և
կենցաղային պայմաններին:

Բնակչարանի առողջապահությունը:

Ի՞նչպես են կիուարում դպրոցներում շենքը մաքուր պահելու
պահանջը (ողը, ջերմությունը, լույսը, շենքի մաքրումը): Դասա-
րանական կահույյքը և նրա օգտագործումը:

Սանիտարա-առողջապահական աշխատանքների կազմակեր-
պումը դասարանում: Առողջ սննդի կանոնները կերակրվելու վա-
րոշ ժամեր, լավ ծամելը, սնունդը ընդունելուց հետո հանգիստ:
Առանձների խնամքը:

Պասերի և նրանց հաջորդող տոնական վորկամոլության
վասակարությունը:

Ծանոթություն հասարակական սննդի կազմակերպությանը:
Առողջապահությունը ճաշարանում:

Զմեռային խաղեր և սպորտ: Նրանց նշանակությունն
առողջությունն ամրապնդելու գործում:

Հանդուստ և վոտնաման (առանձնահատկություններն,
ըստ սեղոնի):

Հագուստի և վոտնամանի խնամքը:

Զրի հասարակական ոգտագործումը: Պայքար խմելու ձրի
աղբյուրները կեղաստելու դիմ: Զրմուղից ոգտվելու հմտություն:

«Սուրբ ջրի» մասին յեղած կրոնական պատկերացումների
անհեթեթությունը:

Ամառվա նշանակությունն առողջությունն ամրապնդելու
համար: Հրապարակի կազմակերպում խաղերի և սպորտի հա-
մար:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Աշխատանքի և հանգստի առողջապահությունը դպրոցում, շեն-
քի առողջապահությունը (մաքրություն, թարմ ող, բարեխառնու-
թյուն), լուսավորությունն ձախ կողմից: Ի՞նչպես բռնել գիրքը:
հեռավորություն աչքերից: Ռոպեական ֆիզկուլտուրայի նշանա-
կությունը դասի ժամանակ: Ի՞նչպես հանգստանալ դասամի-
ջոցին:

Աշխատանքի և հանգստի առողջապահություն: Աշխատանքը
բացովիյա և շենքի մեջ մրսելուց պաշտապանվելու կանոններ
բացովիյա աշխատանքի և խաղի ժամանակ:

Որվա ուժիմը՝ աշխատանք, բացովիյա և շենքի մեջ մրսելուց կանոններ
բացովիյա աշխատանքի և խաղի ժամանակ:

ՀՀ Ազգային գրադարան

իշ:



Գաղափար հիվանդաբեր մանրեների մասին (11
 կներ, վոր յերեվում են վոչ հասարակ աշքով, այէ
 բագիտակով): Ինչպէս կարելի ե վարակվել շփումո
 բակը միջացով (վորովայնային տիֆ, խոլերա, լուծ), արտաշըն-
 շած ողի միջացով (թոքախտով), մանրեներն այրան մեջ թափան-
 ձելու հետեւկանքով (մալարիա, բծավոր տիֆ): Կրոնական ծեսերի
 վասակարությունը (հաղորդություն, պատկերներ ու խաչեր
 համբուրելու և այլն):

Ճանձերը, մօծակները և վոջիկները վորպես վարակ տարա-
 ծողներ: Պայքարի միջացները նրանց դեմ:

Ա.մառային աշխատանքի կազմակերպումը. կազմակերպված
 աշխատանք բաց ողում, կանոնավոր սնունդ և քուն, ֆիզկուլ-
 տուրա, սպորտ, խաղեր: Որդանիզմն ամրապնդելու կանոններ:

Ծանոթություն

1) Առողջապահություն նյութի համար առանձին ժամեր
 չեն հատկացված: Դաստիարակչական աշխատանքի կար-
 գով աշխատուների հետ տարվում են համառոտ զրույցներ և
 կազմակերպիվում ե անհատական առողջապահության կա-
 նոնների կիրառման ամենորյա հակում: 2). 4-րդ դասարանում
 սանիտարիայի և առողջապահության վերաբերյալ նյութը
 միացված ե «Մարդու մարմի կառուցվածքը և կյանքը»

թեմային: